

## Տարևիկ Դավթյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ,  
իրավ. գիտ. թեկնածու

### ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐ

Ամուսնության (հավասարապես նաև ընտանիքի) մասին գիտական գաղափարները միշտ էլ եղել են խոշոր մտածողների ուշադրության կենտրոնում՝ սկսած հին աշխարհի փիլիսոփաներից, գրողներից մինչև միջնադարի, ապա նաև վերջին հարյուրամյակների խոշոր մտածողները, ովքեր իրենց ստեղծագործություններում այս կամ այն չափով անդրադարձել են ամուսնությանը և ընտանիքին առնչվող տարբեր հիմնահարցերի<sup>1</sup>: Նման մեծ ուշադրությունը ամուսնության և ընտանիքի հարցերին, թերևս, պայմանավորված է հասարակության և պետության կյանքում ունեցած նրանց դերով ու նրանց իրականացրած գործառույթներով:

Պատմական տարբեր ժամանակներում ամուսնության երևույթի վերաբերյալ գլխավոր և միաժամանակ խնդրահարույց հարցերից մեկը եղել է դրա էության պարզաբանումը: Այդ հարցի արդիականությունը և կարևորությունը կասկած չեն հարուցում նաև ներկայումս՝ հատկապես խորհրդային անցյալով մեր ժամանանակից իրավական համակարգի համար, քանի որ ամուսնության երևույթի այս կամ այն ընկալմամբ է նաև մեծապես պայմանավորված առավել խորքային հիմնախնդիրը՝ ընտանեկան իրավունքի ճյուղային պատկանելիության հարցը:

Գաղտնիք չէ, որ, ի տարբերության խորհրդային Միության երկրների (և հետխորհրդային երկրների մեծամասնության) օրենսդրությունների, եվրոպական գրեթե բոլոր երկրների իրավական համակարգերում ընտանեկան իրավունքը համարվել և համարվում է ոչ թե իրավունքի ինքնուրույն ճյուղ, այլ ներառված է քաղաքացիական իրավունքի համակարգում՝ որպես նրա ենթաճյուղ: Նման մոտեցման հիմքում ընկած կարևորագույն փաստարկներից մեկը այն

---

<sup>1</sup> Այդ հարցերին առավել մանրամասն անդրադարձել են Մակ Լենանը, Ի. Յա. Բախտֆենը, Լ.Գ. Մորգանը, Ն.Կ. Միխայլովսկին, Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը, Կ. Ի. Լենինը և ուրիշներ, հղումները տե՛ս Դարախանյան Գ. Հ., Հայաստանի ընտանեկան իրավունքի զարգացման պատմությունը 20-րդ դարում (պատմա-իրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն), Երևան, ԵՊՀ, 2004, էջեր 41, 43-44:

է, որ այդ երկրներում ամուսնությունը համարվում է տղամարդու և կնոջ միջև կնքված քաղաքացիաիրավական գործարք (պայմանագիր): Հետևաբար ամուսնության էության հարցի պարզաբանմամբ կարող են կանխորոշվել ՀՀ ընտանեկան իրավունքի հետագա զարգացման որոշ կարևորագույն ուղղություններ:

Ընտանեկան իրավունքի գիտության մեջ ամուսնության բնույթի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրությունների շնորհիվ, բնականաբար, ձևավորվել են բազմազան տեսակետներ ու մոտեցումներ: Դասականներից է համարվում Ա. Ի. Չազորովսկու տեսակետը, ըստ որի՝ ամուսնությունը ներառում է մի քանի տարրեր. ա) բնական (ֆիզիկական) տարր, այսինքն՝ բնության կողմից մարդու մեջ ներդրված հակառակ սեռի նկատմամբ ֆիզիկական ցանկությունը, բ) էթիկական տարր, որն արտահայտվում է ամուսինների փոխադարձ բարոյական կապվածության և նրանց հոգևոր ներաշխարհի փոխներգործության մեջ, գ) տնտեսական տարր, որը տղամարդու և կնոջ միջև առաջացնում է տնտեսական կապ, ձևավորում նրանց ընդհանուր տնտեսությունը, դ) իրավաբանական տարր, որի ուժով ամուսնությամբ կապված անձինք որոշակի կարգավիճակի շնորհիվ ձեռք են բերում իրավունքներ ու պարտականություններ, ե) կրոնական տարր, որի ուժով ամուսնությունը ենթարկվում է կրոնի կանոններին<sup>1</sup>: Այս տարրերի հաշվառմամբ ընտանեկան իրավունքի գիտության մեջ ամուսնության էության վերաբերյալ ընդունվում են երեք հիմնական **հայեցակարգեր՝ ամուսնություն-խորհուրդ, ամուսնություն-պայմանագիր, ամուսնություն-հատուկ ինստիտուտ:**

**Ամուսնությունը խորհուրդ էր** համարվում կանոնական իրավունքի գործողության ժամանակաշրջանում, երբ ամուսնական հարաբերությունների կարգավորումը գտնվում էր եկեղեցու իրավասության ներքո: Կանոնական նորմերը ամուսնության ինստիտուտին հաղորդել էին առեղծվածային բնույթ՝ ընդգծելով նրա հոգևոր կողմը:

Վ.Պ. Պոբեդոնոսցևը նշում է, որ ամուսնությունը մի ամբողջ օրգանական միություն է, որի իմաստն արտահայտվում է բնության հիմնական օրենքում՝ երկու սեռերի միջև տարանջատված մարդկային բնույթի միասնականացման ու ամբողջացման մեջ: Այդ պատճառով զարմանալի չէ, որ ամուսնության երևույթը, տարբերվելով այլ երևույթներից և վեր դասվելով մարդկային ընկալումներից, քրիս-

<sup>1</sup> St'u Zagorovskiy A.I. Kurs семейного права. Одесса, 1909, էջ 5:

տոնեական աշխարհում վերջապես ստացավ խորհրդի նշանակություն: Ի տարբերություն բոլոր այլ պայմանագրային միությունների՝ այս միության մեջ կա հոգևոր ու մարմնական լիարժեք միավորման մեծագույն գաղտնիք<sup>1</sup>:

Ամուսնությունը համարելով «լիարժեք և անբաժան կյանքի» համար տղամարդուն և կնոջը միավորող խորհուրդ, օժտելով այն Աստծո օրհնանքով՝ քրիստոնեական եկեղեցին, այնուամենայնիվ, այդ գաղափարը միատեսակ չի զարգացրել Արևելքում և Արևմուտքում: Ըստ կաթոլիկ եկեղեցու տեսության՝ ամուսնության խորհրդի հիմքը կազմում է «տարասեռ երկու անձանց՝ միմյանց հանձնելը», իսկ ձևը՝ «այն բառերը, գործողությունները և նշանները, որոնք արտահայտում են ամուսնության մեջ մտնելու փոխադարձ համաձայնությունը»: Այս իմաստով հոգևորականի ձևական մասնակցությունը ամուսնության կնքմանը էական չէ, քանի որ «խորհուրդն իրականացնողները ամուսիններն իրենք են», իսկ հոգևորականները վկաների հետ միասին հավաստում են կամարտահայտությունը<sup>2</sup>: Ի զարգացումն սրա՝ եվրոպական (հատկապես ֆրանսիական) օրենսդրություններով ամուսնությունը չէր ճանաչվում ուղղակի խորհուրդ, այլ դիտարկվում էր ընդամենը որպես քաղաքացիական ակտ:

Քրիստոնեական ուղղափառ եկեղեցին ամուսնությունը համարում էր խորհուրդ, առեղծված: Հետևելով այդ ուղղությանը, օրինակ, ցարական Ռուսաստանն իր օրենսդրությամբ, մասնավորապես Հավաք օրինացի 116 պարագրաֆում սահմանում էր, որ «ամուսնությունը խորհուրդ է, որն իրականացվում է երկու տարբեր սեռի անձանց օրինական միավորմամբ, որի շնորհիվ այդ անձինք ամուսնական ամենախնտիմ հարաբերությունների նկատմամբ ստանում են փոխադարձ իրավունքներ»:

Ամուսնության կրոնական և բարոյական էությունները, որպես կանոն, քննարկվել են միասնության մեջ: Դ.Ի. Մեյերը գտնում էր, որ «ամուսնությունը Աստծո հովանավորության տակ գտնվող հաստատություն է, որը ձևավորվում է նրա մասնակցությամբ՝ առեղծվածով: Բարոյական օրենքներն իրենց ոլորտ են ընդունել ամուսնության ինստիտուտը և այն համարում են տարբեր սեռի երկու անձանց

<sup>1</sup> Ст'ю Победоносцев К.П. Курс гражданского права. Т. 2, М. 2003 (Публикация по изданию 1896г.), էջ 55:

<sup>2</sup> Ст'ю Суворов Н.С. Учебник церковного права. М., 2004, էջ 319:

միություն, որը հիմնված է սիրո վրա, որի նպատակը անձի անհատականությունը հակառակ սեռի անձնավորության անհատականությանը լրացնելն է»<sup>1</sup>: Այդ պատճառով ամուսնության երևույթը, գտնվելով կրոնական և էթիկական հասկացությունների ազդեցության տակ, լիարժեք չի մտել իրավունքի դաշտ, ենթարկվել է ոչ միայն աշխարհիկ, այլև եկեղեցական օրենսդրությանը, ինչպես նաև բարոյական օրենքների ազդեցությանը: Հենց այս խառը բնույթն էլ ընդգծվում է հռոմեացի իրավաբան Մոդեստինի հայտնի սահմանման մեջ. «**ամուսնությունը տղամարդու և կնոջ միություն է, որը կյանքի համար, աստվածային և մարդկային ճշմարտության միություն**»<sup>2</sup>:

Վ. Ս. Սոլովյևը նշում է. «Մեր նյութական միջավայրում հնարավոր չէ պահպանել իրական սերը, եթե չես հասկանում այն և չես ընդունում այն որպես բարոյական սխրանք»: Հոգևոր, բարոյական և բնական սկզբունքների միասնականությունը, հաստատում է, որ Աստծո կերպարի լիարժեքությունը կապված է մարդու երկսեռության հետ, և որ մարդու լիարժեք կերպարը տղամարդն ու կինն են հոգևոր-մարմնական ամուսնության միավորման մեջ, սիրո և ամուսնության կուսական միավորումը «քրիստոնեական ամուսնության ներքին խնդիր է»<sup>3</sup>:

Միաժամանակ պետք է ընդունել, որ ամուսնությունը որպես առեղծված համարելը, առանց Աստծուն խորապես հավատալու, բավականին բարդ է, եթե ոչ անհնար: Քանի որ ներկայումս գիտությունը չի կարող ոչ ապացուցել, ոչ հերքել Աստծո գոյությունը, ակնհայտ է, որ ամուսնությունը որպես հոգու փոխներթափանցում, ներդաշնակ միասնություն, որը խորհրդանշում է Աստծո և Եկեղեցու միությունը, ընկալվում է առավելապես որպես պարտադրված, քան որպես ամուսնության էություն<sup>4</sup>:

Մ. Վ. Անտոկոլսկայայի արդարացի պնդմամբ՝ այն մասով, որով ամուսնությունն ընկած է կրոնաէթիկական կամ միայն էթիկական միջավայրում, ամուսնությունը կարող է դիտարկվել որպես խոր-

<sup>1</sup> St'u Мейер Д.И. Русское гражданское право. Ч. 2/ Д.И. Мейер. М., 1997. (По изданию 1902), էջ 348:

<sup>2</sup> St'u Мейер Д.И., նշված աշխ., էջ 349:

<sup>3</sup> St'u Кудрина С.А., Филькин А.Н. Мужчина-женщина-любовь: печать греха или тайн вечности? Ярославль, 1997, էջ 74:

<sup>4</sup> St'u Сивохина С.В., Понятие брака и условия его действительности в современном праве России и Франции: диц....канд. юрид. Наук. Самара, 2006, էջ 70:

հուրդ, առեղծվածային միություն: Այդ ամենը գտնվում է իրավունքի սահմաններից դուրս և համարվում է յուրաքանչյուր անուսնական գույզի բացառապես անձնական գործը<sup>1</sup>:

**Անուսնությունը որպես պայմանագիր**<sup>2</sup> ընկալումը սկիզբ է առնում Հին Հռոմից: Ղասական ժամանակաշրջանի հռոմեական իրավունքում անուսնության բոլոր հիմնական ձևերը համարվում էին քաղաքացիական գործարքներ (երկու տարասեռ անձանց կոնսենսուսով գործարքներ, առանց պարտադիր հայտարարության, որոնք առաջացնում էին քաղաքացիաիրավական հետևանքներ): Երկար ժամանակ, իհարկե, գոյություն ունեին անուսնության երկու էապես տարբեր ձևեր՝ *matrimonium cum manu* (կնոջ անձի նկատմամբ անուսնու իշխանության տարածմամբ) և *matrimonium sine manu* (առանց այդ իշխանության, ազատ անուսնություն, որն իրականացվում էր տղամարդու և կնոջ ազատ համաձայնությամբ, և ազատորեն կարող էր դադարել երկուսի կամ նրանցից մեկի ցանկությամբ)<sup>3</sup>:

Անուսնություն-պայմանագիր հայեցակարգը նոր թափ ստացավ, երբ անուսնության քաղաքացիական ակտն առանձնացավ Եկեղեցուց և կանոնական իրավունքից: Անուսնական հարաբերությունների նկատմամբ սկսեցին կիրառվել քաղաքացիական օրենսդրության նորմերը<sup>4</sup>: Ֆրանսիայի 1791 թ. Սահմանադրությամբ սահմանվեց, որ անուսնությունը քաղաքացիաիրավական գործարք է: Անուսնության քաղաքացիական ձևը և նրա պայմանագրային էությունը տեղ գտան Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքում՝ այն կնքելու նվազագույն պահանջներով, տիպիկ պարտավորական տարրերով և փոխադարձ համաձայնությամբ (ընդ որում՝ ոչ անուսինների իրավահավասարության հիման վրա) լուծելու հնարավորության նախատեսմամբ: Անուսնությունը սկսեց դիտարկվել որպես

<sup>1</sup> Տե՛ս Антокольская М.В. Семейное право. М., 2002, էջ 111:

<sup>2</sup> Անուսնություն-պայմանագիր և անուսնական պայմանագիր հասկացությունների եզրութաբանական նմանությունը չի նշանակում դրանց համընկնում, ոչ էլ դրանցով բնորոշվող երևույթների հակադրում: Առաջինն ընկալվում է որպես առավելապես անձնական-իրավական, երկրորդը՝ գույքային-իրավական բնույթի հարաբերություն: Երկու դեպքում էլ, որպես ընդհանուր, առկա են «համաձայնեցվածության» տարրեր: Գոյություն ունի նաև երրորդ կառուցվածքը՝ անուսնության կնքման համաձայնագիր (նշանադրություն, խոսք առնել և այլն):

<sup>3</sup> Տե՛ս Покровский И.А. История римского права. СПб., 1998, էջեր 452-453:

<sup>4</sup> Առաջին անգամ դա վերջնականապես կատարվեց Հոլանդիայում 1580թ.:

«մաքուր քաղաքացիաիրավական գործարք», ինչը ընդունվեց եվրոպական իրավունքի տեսության և շատ եվրոպական պետությունների քաղաքացիական հայեցակարգերի կողմից<sup>1</sup>:

Պայմանագրային հայեցակարգը հիմնվում է երեք հիմնադրույթների վրա, որոնք ամուսնությունը դիտարկում էին որպես պայմանագիր: Դրանք են՝ ամուսնության ձևին և վավերության պայմաններին ներկայացվող պահանջները, ամուսիններից մեկի մեղքով ամուսնության լուծման դեպքում վնասների հատուցում պահանջելու մյուս ամուսնու իրավունքի, ինչպես նաև ամուսինների գույքի օրենսդրական ռեժիմից շեղվելու և պայմանագրային ռեժիմ սահմանելու հնարավորության նախատեսումը<sup>2</sup>:

Հատկանշական է, սակայն, որ նույնիսկ դասական իրավագետները տարածայնություններ ունեն ամուսնությունը պայմանագիր համարելու հարցում: Օրինակ՝ ժուլիո Դե Լա Մորանդիերը սահմանում է ամուսնությունը որպես «օրենքով սահմանված կարգով կնքված քաղաքացիական գործարք, որը միավորում է կնոջն ու տղամարդուն համատեղ կյանքի համար»: Միաժամանակ հեղինակը նշում է, որ դա ըստ էության պայմանագիր-նախադրյալ է, որը կնքվում է ազատ, բայց ունի իմպերատիվ հետևանքներ, որը սահմանում է քաղաքացիական կարգավիճակ ոչ միայն ամուսինների, այլև երեխաների, հարազատների, այլ անձանց համար, այսինքն՝ պայմանագիր, որն ունի բացարձակ ուժ<sup>3</sup>:

Լ. Ժոսերանը ամուսնությունը սահմանում է որպես տղամարդու և կնոջ՝ քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան պաշտոնապես կնքված դաշինք: Դրանից հետևում է, որ 1) ամուսնությունը պայմանագիր է, 2) այդ պայմանագիրը կնքվում է պաշտոնական արարողակարգով, 3) դիտարկվում է որպես անձանց ընդհանրություն, 4) դասվում է քաղաքացիական օրենսդրության գործողության ոլորտին:

Ժ. Յուբերխտը և Ժ. Վերմելը, մեկնաբանելով Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 13 հոդվածը, նշում են, որ ամուսնությունը քաղաքացիական պայմանագիր է և հանդիսավոր ակտ, որի միջո-

<sup>1</sup> St'u Сивохина С.В., նշված աշխ. էջեր 26-30:

<sup>2</sup> St'u Гражданское и торговое право капиталистических государств / под ред. Е.А. Васильева. М., 2005, էջեր 517-518:

<sup>3</sup> St'u Жюллио Де ла Морандьер Л., Гражданское право Франции. М., 1958, էջ 323:

ցով տղամարդը և կինը միավորվում են համատեղ ապրելու, ընտանիք ստեղծելու և վերջինիս համատեղ նյութական ու բարոյական աջակցություն ցուցաբերելու նպատակով<sup>1</sup>:

Դժվար չէ նկատել, որ ի տարբերություն Լ. Ժոսերանի մոտեցման, վերջին դատողության հեղինակները ամուսնությունը լիովին չեն մեկնաբանում որպես պայմանագիր, ավելի շուտ խոսքը ամուսնական համաձայնության՝ որպես ամուսնական իրավահարաբերության առաջացման նախադրյալի մասին է:

Ամուսնության պայմանագրային տեսության ուղղակի կողմնակից էր Ի.Գ. Օրշանսկին, ով պնդում էր, որ, օրինակ, գյուղացիական ամուսնությունն առեղծված չէ, այլ երկու ընտանիքների միջև առուժախի տիպի պայմանագիր: Նա բերում էր հետևյալ փաստարկները. 1) ամուսնությունը իրականացնում է արժեքների՝ աղջկա աշխատուժի փոխանցում աղջկա ծնողներից տղայի ծնողներին, 2) դա, որպես կանոն, նախորդվում կամ ուղեկցվում է տնտեսության մեջ գույքային ներդրումների մասին համաձայնություններով, 3) ամուսնությունը կազմակերպվում է ծնողների կողմից, որտեղ հատկապես աղջիկը համարվում է գործարքի առարկա: Ի հաստատումն հարսնացուի իրային նշանակության՝ նշվում էր, որ ընտրության ժամանակ հաշվի են առնվում ոչ թե նրա սերը տղամարդու նկատմամբ, նրա գրավչությունը, այլ նրա ֆիզիկական վիճակը և աշխատասիրությունը (աշխատուժի պիտանելիությունը), իսկ սերը և զգացմունքները գրեթե դեր չեն խաղում գյուղացիների ամուսնության ժամանակ:

Ս. Վ. Պախմանը կտրականապես դեմ էր ամուսնության նման մեկնաբանման հետ՝ նախ նշելով, որ գույքային գործարքների նշանակություն կարելի է տալ միայն տարբեր նախաամուսնական պայմաններին (հարսնացուի և փեսացուի գույքային ներդրումներին, օժիտին և այլն), հավասարապես նաև ամուսնության համաձայնության ապահովման պայմաններին: Սակայն դրանք ամուսնության կապակցությամբ են, այլ ոչ թե հենց ամուսնության մասին: Կան մի շարք փաստարկներ հարսնացուի անձի նշանակության, նրա արտաքինը և նրա զգացմունքները հաշվի առնելու մասին: Օրինակ՝ կուսության պահանջը (և հետո հավատարմության) հազիվ թե բնութագրում է կնոջը որպես իր<sup>2</sup>: Երկրորդ, ըստ հեղինակի, եթե ամուս-

<sup>1</sup> Տե՛ս Сивохина С.В., նշված աշխ., էջեր 41-42:

<sup>2</sup> Տե՛ս Пахман С.В. Обычное гражданское право в России. М., 2003, (Труды 1877 и 1879 гг.), էջեր 390-392:

նությունը պայմանագիր է, պարտավորություն է, ապա այն պետք է կատարվի որոշակի ժամկետում: Մինչդեռ, ամուսնությունը սկզբունքորեն ցմահ միություն է (չնայած ամուսնալուծությունների դեպքերին): Ամուսնությունը հատուկ տեսակի իրավահարաբերություն է, հասարակության համար ցանկալի, դասական ընտանիքի առաջացման հիմք<sup>1</sup>: Այստեղից բխում է, որ երրորդ՝ ամուսնական միությունը բացառապես մասնավոր գործ չէ: Բացի այդ, ամուսնությունը մեծ իրադարձություն է գյուղացու կյանքում և չափազանց կարևոր փոփոխություն նրա կարգավիճակում: Նման բան հազիվ թե հանդիպի, օրինակ, առուծախի, վարձակալության և այլ մասնավոր գործարքների դեպքում<sup>2</sup>: «Ամուսնությունը, գյուղացիության ընկալմամբ էլ գույքային գործարք չէ, այլ երկու տարասեռ անձանց հատուկ իրավաբանական վիճակ, որը ծեռք է բերվում թեև նախնական համաձայնության պայմաններում, բայց ոչ թե ժամկետով, այլ ամբողջ կյանքում, և ամրագրված է հասարակական ճանաչման սանկցիայով»<sup>3</sup>:

Իր դատողությունները գիտնականն ավարտում է այն հանգամանքների մատնանշմամբ, որոնք իր կարծիքով հանգեցնում են ամուսնության բնույթի վերաբերյալ ոչ ճիշտ ընկալումների: Պրանք են՝ 1) ամուսնության էությունը նույնացվում է նրա մի շարք նպատակների հետ (տնտեսական շահը անկասկած է, բայց դրանից չի բխում, որ ամուսնությունը միայն տնտեսական միություն է): 2) պայմանագիրը՝ որպես գույքային գործարք, նույնացվում է ամուսնության մասին համաձայնության՝ որպես անձնական իրավունքի հետ, 3) ամուսնության իրավաբանական բնույթը նույնացվում է նրա կատարման ձևի հետ. եթե ամուսնությունը հատուկ իրավահարաբերություն է, որը պահանջում է հասարակական ճանաչում, ապա ակնհայտ է, որ նրա իրավաբանական բնույթը ուղղակիորեն կախված չէ նման ճանաչման ձևից (պսակադրություն, գրանցում-սանկցիա որպես իրավունքների վիճակի ակտ և այլն)<sup>4</sup>:

Այսպիսով, Ս.Վ. Պախմանը ամուսնության էությունը չէր հանգեցնում պայմանագրի, նրա համար այն հատուկ տեսակի քաղաքացիական (այդ ժամանակ ընտանեկան իրավունքի ոչ սուվերենության հաշվառմամբ) իրավահարաբերություն էր, թեև որպես դրա առաջացման նախադրյալ (իրավաբանական փաստ), անկասկած,

<sup>1</sup> Տե՛ս Пахман С.В., նշված աշխ., էջեր 392-393:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

համարվում էր համաձայնությունը՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագրի հատուկ տարատեսակ:

Ժամանակակից ռուս ցիվիլիստիկայում պայմանագրային տեսության կողմնակիցներն են Մ.Վ. Անտոկոլսկայան և որոշ այլ հեղինակներ<sup>1</sup>:

**Ամուսնությունը հատուկ ինստիտուտ** տեսության կողմնակիցներն ընդհանուր առմամբ ընդունում են ամուսնության մեջ պայմանագրային տարրերի գոյությունը, սակայն հրաժարվում են այն պայմանագիր համարելուց:

Ա. Ի. Ջագորովսկին ընդգծում էր, որ ամուսնությունը «իր ծագման մեջ ներառում է պայմանագրային համաձայնության տարրեր, սակայն իր բովանդակությամբ և դադարման հարցերում, հեռու է պայմանագիր համարվելուց: Ինչպես ամուսնության բովանդակությունը, այնպես էլ այն լուծելը կախված չէ ամուսինների կամայական վարքագծից: Այդ պատճառով ամուսնության ինստիտուտը պետք է դասել ոչ թե պայմանագրային իրավունքի ոլորտին, այլ հատուկ ինստիտուտի (sui generis) շարքին»<sup>2</sup>:

Գ. Ֆ. Շերշենևիչը հստակ տարանջատում էր ամուսնության մասին համաձայնությունը՝ որպես ամուսնական իրավահարաբերության առաջացման նախադրյալ, և հենց ամուսնական իրավահարաբերությունը: Նա նշում էր, որ իրավական տեսակետից ամուսնությունը համատեղ ապրելու նպատակով տղամարդու և կնոջ միություն է, որը հիմնված է փոխադարձ համաձայնության վրա և կնքված է սահմանված ձևով: Առանց փոխադարձ և կամավոր համաձայնության՝ ամուսնությունը չի կարող օրինական լինել: Ինչպես ցանկացած պայմանագիր, ամուսնությունը ենթադրում է կամքի ազատություն և գիտակցում: Սակայն քանի որ ամուսնության նպատակը համատեղ ապրելն է ֆիզիկապես և բարոյական առումով, այստեղ բացահայտվում է ամուսնության և պարտավորության միջև տարբերությունը, որոնք երկուսն էլ կարող են հիմնված լինել պայմանագրի վրա: Երբ պայմանագիրն ուղղված է մեկ կամ մի քանի որոշակի գործողությունների կատարմանը, ապա դրա հետևանքը կլինի պարտավորական հարաբերություն, օրինակ՝ ընկերակցության մեջ: Ամուսնական համաձայնությունը նկատի չունի որոշակի գործողություն-

---

<sup>1</sup> Տե՛ս օրինակ, Антокольская М.В., Семейное право, 2002, էջեր 111-114; Гражданское право / под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. М., 2001, Т. 3, էջ 317:

<sup>2</sup> Տե՛ս Загоровский А.И., նշված աշխ., էջ 5:

ներ, բայց որպես ցմահ ընդհանրություն՝ այն ըստ էության ունի բարոյական, այլ ոչ թե տնտեսական բովանդակություն<sup>1</sup>:

Ս. Վ. Միվոլիսինյան արդարացիորեն հստակեցնում է, որ Ա. Ի. Ջագորովսկին, Գ. Ֆ. Շերշենևիչը և մինչիեղափոխական ժամանակաշրջանի գիտնականների զգալի մեծամասնությունը ընտանեկան իրավունքը համարում էր քաղաքացիական իրավունքի մասը, հետևաբար նրանք ամուսնությունը դիտում էին որպես քաղաքացիական իրավունքի հատուկ ինստիտուտ<sup>2</sup>: Միաժամանակ Ա. Բորովիկովսկին բազմիցս նշում էր, որ խորհրդային քաղաքացիաիրավական դրույթները ընտանեկանի համար պիտանի չեն: Ընտանիքի իրավաբանական կարգը այս ինստիտուտին տալիս է այնպիսի sui generis-ին բնորոշ գծեր, որոնք արդեն բոլորովին համատեղելի չեն մասնավոր իրավունքի հիմնարար սկզբունքների հետ:

Ս. Վ. Պախմանը գրում էր, որ ամուսնական միությունը պարտավորություն և ամուսնության մասին համաձայնություն չէ, ոչ էլ սովորական գույքային պայմանագիր: Այն հատուկ տիպի իրավահարաբերությունների (ինչպիսին է անձանց ամուսնական վիճակը) մեջ մտնելու մասին համաձայնություն է<sup>3</sup>:

Ինչպես տեսնում ենք, ամուսնության՝ որպես հատուկ ինստիտուտի հայեցակարգը դուալիստական է: Ամուսնացողների համաձայնությունը ամուսնության մեջ մտնելու մասին (պայմանագիր) և ինքնին ամուսնական կարգավիճակը (ոչ պայմանագիր): Գաղափար, որը պահպանվում է շատ հեղինակների աշխատություններում<sup>4</sup>:

Ավելորդ չէ նշել, որ **ամուսնություն-հատուկ ինստիտուտ** տեսության ժամանակակից որոշ կողմնակիցներ այն անվանում են «կարգավիճակ»<sup>5</sup>, որը ձեռք է բերվում սուբյեկտի կողմից օրենքով

---

<sup>1</sup> St'u Шершеневич Г.Ф., Учебник русского гражданского права. Казань, 1905, էջեր 586-587:

<sup>2</sup> St'u Сивохина С.В., նշված աշխ., էջ 71:

<sup>3</sup> St'u Пахман С.В. Обычное гражданское право в России. М., 2003, (Труды 1877 и 1879 гг.), էջեր 390-392:

<sup>4</sup> St'u Синайский В.И. Русское гражданское право. М., 2002, էջ 485; Тютрюмов И.М. Гражданское право. Юрьев, 1992, էջ 394; Сивохина С.В., նշված աշխ., էջ 72:

<sup>5</sup> **Ամուսնություն-հատուկ ինստիտուտ** տեսության շրջանակներում զարգացում ստացավ նաև ամուսնությունը որպես զուգընկերություն մոտեցումը, սակայն իրավական տեսակետից արդյունավետ չէ հեռանալ պայմանագրից, քանի որ օգտագործված եզրույթը նեղ իմաստով համարժեք է հասա-

ամրագրված գործողությունների կատարման արդյունքում և տալիս է նրան ամուսնացած մարդու որակում: Ամուսնացածներից երկուսն էլ ձեռք են բերում իրավունքներ և կրում են պարտականություններ, որոնք խստորեն որոշված են օրենքով, և չեն կարող փոխվել կամ վերացվել նրանց կամքով<sup>1</sup>:

### **Այսպիսով, վերը շարադրվածի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ՝**

1. Ամուսնությունը՝ որպես առեղծված, խորհուրդ, այդպես էլ տեղ չգտավ ամուսնության բացառապես աշխարհիկ բնույթի և մեր հասարակության մեջ երկարամյա աթեիստական մոտեցման գերիշխանության պայմաններում:

2. Ամուսնության պայմանագրային տեսության մերժումը պայմանավորվեց սոցիալիստական և բուրժուական գիտական, փիլիսոփայական, քաղաքական և իրավական մտքի գաղափարական հակադրվածությամբ: Սոցիալիստական (հետո կոմունիստական) ամուսնությունը չէր կարող գործարք լինել, այն պետք է ազատ լիներ նյութական հաշվարկներից և որպես հետևանք՝ նաև իրավական կարգավորումներից: Որպես դրա շարունակություն՝ խորհրդային ընտանեկան իրավունքի և օրենսդրության սուվերենությունը, ընտանեկան իրավունքի կառուցման սկզբունքների փոփոխությունը, ամուսնության և ընտանիքի վերաբերյալ մինչհեղափոխական հիմնադրույթների վերացումը էլ ավելի անխուսափելի դարձրին բուրժուական ամուսնություն-պայմանագիր և խորհրդային ամուսնություն-ոչ պայմանագիր հակադրությունը՝ փնտրելով սոցիալիստական ամուսնության նոր, այդ թվում՝ իրավական էությունը: Ահա այս ուղղությունն էլ պահպանվեց հետխորհրդային երկրների մեծամասնության, այդ թվում՝ մեր օրենսդրության մեջ:

---

րակ ընկերակցության պայմանագրին, լայն իմաստով՝ համաձայնությանն ընդհանրապես:

<sup>1</sup> Ամուսնության պայմանագրային տեսության կողմնակիցները, սակայն, գտնում են, որ այդ հանգամանքը չի ժխտում իրենց մոտեցումը, քանի որ քաղաքացիաիրավական պայմանագրում նույնպես կան պարտադիր պայմաններ, իմպերատիվ դրույթներ: Սյուս կողմից՝ ամուսնական իրավահարաբերության մասնակիցները զրկված չեն օրենքի ուղղակի կարգավորումից շեղվելու հնարավորությունից՝ կնքելով, օրինակ, ամուսնական պայմանագիր: Բացի այդ, սուբյեկտները կարող են ամուսնական կարգավիճակ ձեռք բերել միայն համաձայնության, այլ ոչ թե միակողմանի կամարտահայտության հիման վրա: (Վերջին միտքն ընդունելի է, քանի որ ամուսնական պայմանագիրն ինքնուրույն պայմանագիր է): Տե՛ս Гражданское и торговое право капиталистических государств / под ред. Е.А. Васильева. М., 2005, էջեր 517-519:

3. Խորհրդային և հետխորհրդային շատ ցիվիլիստներ ամուսնությունը համարել և համարում են հատուկ ինստիտուտ՝ դրա ներսում ունենալով տարբեր մոտեցումներ:

**Մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, ովքեր ընդունում են ամուսնությունը որպես համաձայնություն (պայմանագիր) և որպես իրավահարաբերություն: Ամուսնությունը մենք համարում ենք ոչ թե որպես քաղաքացիաիրավական, այլ ընտանեկան-իրավական պայմանագրի տարատեսակ<sup>1</sup>:**

Մեր այս տեսակետը հիմնավորելու համար անդրադառնանք պայմանագրի երևույթին:

Ինչպես գիտենք, այն հատուկ է ոչ միայն քաղաքացիական շրջանառությանը, այլև իրավական այլ ոլորտների՝ միջազգային, պետական, վարչական, ֆինանսական, աշխատանքային, հողային, ընտանեկան, քաղաքացիադատավարական (հաշտության համաձայնություն քաղաքացիական դատավարության և արբիտրաժային պրոցեսում), նույնիսկ քրեաիրավական և քրեադատավարական (օրինակ՝ բացառիկ դեպքերում տուժողի և հանցագործություն կատարած անձի միջև):

Պայմանագրի միակ իրավական բնորոշումը տրված է ՀՀ քա-

---

<sup>1</sup> Տեսականորեն ամուսնության ճանաչումը՝ որպես պայմանագիր, և ամուսնական պայմանագրի (գույքային իրավունքների ու պարտականությունների մասին համաձայնություն) արդեն իսկ օրենսդրական ամրագրումը կարևոր փաստարկներ կարող են լինել ընտանեկան իրավունքի «դեսուվերենության», նրան դեպի մայր ճյուղ՝ քաղաքացիական իրավունք վերադարձնելու համար: Եթե հաշվի առնենք նաև մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքները, որ ընտանեկան պայմանագրային իրավունքի կիսաբանկետային բնույթը, դրա չմշակվածությունը տեսության մեջ, ընտանեկան օրենսդրությամբ այնպիսի հասկացությունների բացակայությունը, ինչպիսիք են իրավունակությունը, գործունակությունը, կամքի ինքնավարությունը պայմանագրում և այլն առաջացնում են ոչ միայն ընտանեկան (ամուսնական) հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրության դրույթների սուբսիդիար, այլև մի շարք դեպքերում քաղաքացիական և ընտանեկան օրենսդրության նորմերի՝ որպես ընդհանուրի և հատուկի կիրառման անհրաժեշտություն, ապա ընտանեկան իրավունքի «դեսուվերենությունը» կարող է առավել ակնհայտ թվալ: Նկատենք, սակայն, որ տեսության մեջ որևէ ինստիտուտի չմշակվածությունը և օրենքում հասկացությունների բացակայությունը (մեր դեպքում պայմանագրի) անհրաժեշտ և բավարար փաստարկներ չեն «դեսուվերենության» համար. հարկավոր է մշակել և ներդնել դրանք: Առավել ևս, որ որոշակի դեպքերում քաղաքացիական օրենսդրության նորմերը հնարավոր չէ կիրառել ընտանեկան հարաբերությունների նկատմամբ, ինչի մասին նշում են մի շարք ցիվիլիստներ:

ղաքացիական օրենսգրքում (436 հոդվ.):

Ն. Գ. Ալեքսանդրովը, պայմանագիրն ուսումնասիրելով որպես հարաբերությունների կարգավորիչներից մեկը, սահմանում է այն որպես երկու կամ մի քանի ձևականորեն հավասար (պայմանագրի կնքման պահին) սուբյեկտների «համաձայնեցված» կամահայտնություն՝ իրավաբանական հետևանքներ առաջացնելու նպատակով<sup>1</sup>: Փաստորեն գիտնականը նախ ընդգծում է պայմանագրի երկու հատկանիշներ. նախ՝ համաձայնեցվածությունը (կամային բնույթը) և իրավական նպատակը, երկրորդ՝ նշում է ձևական հավասարության կամ հավասարության ձևական լինելու մասին: Վերջին միտքը, ըստ էության, կանխորոշում է պայմանագիր երևույթի զարգացման էական ուղղություններից մեկը՝ դեպի հանրային-իրավական ոլորտ, ինչպես նաև մասնավոր իրավունքի այն ոլորտներ ներթափանցելը, որտեղ հանրային հիմունքները բավականին ուժեղ են (ընտանեկան և աշխատանքային): Այս դեպքերում՝ պայմանագրային իրավիճակներում (այլ ոչ թե համապատասխան ճյուղի հարաբերությունների ողջ համալիրում), կատարվում է սուբյեկտների կարգավիճակի հաճախ «արհեստական» հավասարեցում:

Յու. Ա. Տիխոմիրովը պայմանագիրը համարում է կողմերի համաձայնություն, որն առաջացնում, փոփոխում, դադարեցնում է իրավունքներ ու պարտականություններ: Այն բնութագրվում է որպես՝ մասնակիցների ազատ կամարտահայտություն՝ պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնեցվածությամբ, կողմերի համավասարությամբ, կատարման իրավական երաշխիքներով, որպես կանոն հատուցելիությամբ, ստանձնած պարտավորությունների չկատարման համար մասնակիցների փոխադարձ պատասխանատվությամբ: Այդպիսով հեղինակը կարծես հիմք է նախապատրաստում հետագայում պայմանագրային իրավունքի ձևավորման համար՝ իրավունքի շատ ճյուղերում դրանց քանակի ավելացման և պայմանագրի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի հատուկ դերի բարձրացման հաշվառմամբ<sup>2</sup>: Դժվար չէ նկատել, սակայն, որ նշված վեց կետերը նշանակալի չափով արտացոլում են հենց քաղաքացիաիրավական պայմանագրի, այլ ոչ թե բազմունակ (ունիվերսալ) պայմանագրի հատկանիշները (թեև գիտ-

<sup>1</sup> St' u Александров Н.Г., К вопросу о роли договора в регулировании общественных отношений // Учен. Зап. ВИЮН. Вып. 6. М., 2002, էջ 82:

<sup>2</sup> St' u Тихомиров Ю.А., Договор как регулятор общественных отношений // Правоведение. 1990. N 5, էջեր 28-30:

նականը դասակարգում է պայմանագրերն ըստ սուբյեկտի և կիրառման ոլորտի՝ տնտեսական, վարձակալական, աշխատանքի ոլորտում, միջպետական, կառավարչական, հասարակական<sup>1</sup>: Ակնհայտ է, որ ոչ բոլորն են սրանցից, որ դասական են: Այդպիսին է նաև ընտանեկան իրավական պայմանագրային կառուցվածքների մեծ մասը, ինչի մասին, սակայն, հեղինակը որևէ բան չի նշում<sup>2</sup>:

Օ. Յու. Սկվորցովը նշելով մարդկանց միջև հարաբերությունների կարգավորման տարբեր ոլորտներ պայմանագրերի ներթափանցման փաստը, իրավաչափ է համարում հարցադրումը պայմանագրային կարգավորման միջճյուղային բնույթի մասին և միաժամանակ արդարացիորեն ընդգծում է քաղաքացիաիրավական պայմանագրի կառուցվածքի գերակա ազդեցությունը իրավունքի հարակից ճյուղերի կառուցվածքների վրա: Բնականաբար առաջինի գլխավոր հատկանիշը, որը տարբերում է նրան երկրորդներից, ըստ հեղինակի, նրա թողած իրավական հետևանքն է՝ քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների առաջացումը, փոփոխումը, դադարումը: Այլ տարբերիչ հատկանիշներից են սահմանափակ կարգավորիչ ազդեցությունը, սուբյեկտների հավասարությունը, նշանակալի ազատությունը (մինչդեռ, օրինակ, դատավարական իրավունքի ոլորտում պայմանագրերը ենթարկված են այլ սկզբունքի. թույլատրված է այն ամենը, ինչ ուղակիորեն նախատեսված է օրենքով)<sup>3</sup>:

Վ. Վ. Իվանովն այն կարծիքին է, որ իրավագիտությունը նախկինի պես ուսումնասիրում է հիմնականում ճյուղային պայմանագրեր՝ «բավարար պատկերացում չունենալով այն մասին, թե ինչ է պայմանագիրն «ամենալայն իմաստով»: Գիտնականը պայմանագիրը բնորոշում է որպես «համատեղ իրավական ակտ, որը ձևակերպում է ձևականորեն հավասար երկու կամ մի քանի անձանց առանձնացված համաձայնեցված ինքնավար կամահայտնությունը, սահմանում է պայմաններ, որոնց կատարումը ենթադրվում է պար-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 29:

<sup>2</sup> Հավանաբար այն պատճառով, որ ամուսնական պայմանագրի երևույթը դեռևս օրենսդրորեն չէր ամրագրվել և սրել այդ խնդիրը:

<sup>3</sup> Հետևելով պետերբուրգյան ցիվիլիստիկայի՝ ընտանեկան իրավունքը որպես քաղաքացիական իրավունքի ենթաճյուղ համարելու հայտնի մոտեցմանը, հեղինակը, չմերժելով պայմանագրի գոյությունը հանրային, աշխատանքային ոլորտներում, հավանաբար, գիտակցաբար չի հիշատակում ընտանեկան-իրավական պայմանագրի երևույթի մասին:

տաղիր»<sup>1</sup>: Թեև հեղինակը չի օգտագործում «համաձայնություն» հասկացությունը, սակայն իր տված բնորոշմամբ անխուսափելիորեն հանգում է դրան: Ուշագրավ է, որ հեղինակը նշում է պայմանագրի պայմանների կատարման պարտադիրության միայն կանխավարկածը, ինչը տրված սահմանումը դարձնում է առավել բազմունակ (ունիվերսալ), քանի որ ցանկացած կանխավարկած հերքելի է:

Վերը շարադրվածը վկայում է, որ իրավունքի տեսության մեջ շարունակվում են պայմանագրի կիրառման ոլորտի ընդլայնման վերաբերյալ հիմնավորումները, միաժամանակ փաստ է, որ ժամանակակից օրենսդրությունը, արձագանքելով հասարակության կյանքում կատարվող ազատական փոփոխություններին, ավելի անխուսափելի է դարձնում այդ հանգամանքը՝ օրենսդրության տարբեր ճյուղերում վերանայելով հանրային և մասնավոր հիմունքների համամասնությունը, հանրային համարվող կամ հանրային ուժեղ հիմունքներով օրենսդրության ճյուղերում պայմանագրային կառուցվածքներ նախատեսելով կամ դրանց թիվն ավելացնելով: Այս հանգամանքն, անշուշտ, պահանջում է ուսումնասիրություններ և կանխորոշում է օրենսդրության զարգացման նոր ուղղություններ: Անհնար է այդ ոլորտներում քաղաքացիաիրավական պայմանագրային ռեժիմի անվերապահ տարածումը:

Անդրադառնալով ընտանեկան իրավունքին՝ Ա. Դ. Կորեցկին նշում է, որ ընտանեկան իրավահարաբերությունների պայմանագրային կարգավորումը գտնվում է սաղմնային վիճակում. 1) դրանք բոլորը երկրողական, օժանդակ բնույթ են կրում նորմերի համեմատ, դրանց նշանակությունը հանգում է այդ նորմերի մանրամասնանը, իսկ հայեցողության սահմանները խիստ սահմանափակ են, 2) որպես կանոն, դրանք չունեն հարկադրանքի մեխանիզմներ, 3) համաձայնության պայմանները դատարանի համար պարտադիր չեն համարվում, 4) օրենքում բացակայում են պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները<sup>2</sup>:

Մի կողմից հեղինակը ձիշտ է, որ ընտանեկան իրավունքի պայմանագրային բաղկացուցիչը գտնվում է կայացման փուլում: Մյուս

<sup>1</sup>St'u Иванов В.В., Общие вопросы теории договора. М., 2001. էջեր 9-10:

<sup>2</sup> St'u Корецкий А.Д., Теорико-правовые основы учения о договоре. СПб., 2001, էջեր 122-126:

կողմից, սակայն, այս կամ այն ինստիտուտը քաղաքացիական օրենսդրության մեջ դասելը (կամ հարակից երևույթների նկատմամբ քաղաքացիական իրավունքի դրույթների կիրառումը) միշտ չէ, որ նշանակում է դրա քաղաքացիաիրավական բնույթի անվերապահ ընդունումը ոչ միայն օրենսդրական, այլև տեսական մակարդակում:

Միջազգային, պետական, աշխատանքային և այլ իրավունքների գիտության մեջ տրված պայմանագրի վերաբերյալ սահմանումները շատ նման են քաղաքացիական օրենսդրության սահմանմանը: Խոսքը **համաձայնության մասին է**, որը պետության կողմից ճանաչվում և պահպանվում է, սահմանում է մասնակիցների փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ<sup>1</sup>:

Ա. Դ. Կորեցկին գտնում է, սակայն, որ պայմանագրի նման սահմանումը համարվում է ձևական և «պիտանի չէ պայմանագրի մասին լուրջ ուսմունքի համար»: Հեղինակը կասկած է հայտնում որպես սեռային հասկացություն «համաձայնությունը» գործածելու վերաբերյալ, քանի որ նախ՝ «պայմանագիր» և «համաձայնություն» բառերը հոմանիշներ են, երկրորդ՝ ոչ բոլոր համաձայնություններն են հասնում նշանակված նպատակին, երրորդ՝ համաձայնությունը զուտ կողմերի մտադրությունն է կատարել այս կամ այն գործողությունը<sup>2</sup>: Ըստ հեղինակի՝ պայմանագիրը՝ որպես համաձայնություն, հասունացել է քաղաքացիական իրավունքի գիտության մեջ, սակայն համարվում է չհաջողված<sup>3</sup>: Իրավաբանական պայմանագիրը օրենքով սահմանված կարգով օբյեկտիվ ձև ստացած, ազատորեն համաձայնեցված մի քանի անձանց մտադրությունն է միմյանց հետ իրավաբանական գործարք կատարելու սեփական շահերի իրականացման նպատակով»<sup>4</sup>:

Համաձայնություն և պայմանագիր երևույթների հարաբերակցության մասին Մ.Ի. Բրազինսկին և Վ.Վ. Վիտրյանսկին նշում են, որ կամքի համաձայնեցման հետ մեկտեղ պայմանագիր-գործարքի հա-

<sup>1</sup> Տե՛ս Կорецкий А.Д., նշված աշխ., էջ 12:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջեր 13-15:

<sup>3</sup> Տե՛ս Կорецкий А.Д., Теория договорного регулирования гражданско-правовых отношений: Автореф.дисс...-ра юрид. Наук. Ростов н/Д., 2007, էջ 19:

<sup>4</sup> Տե՛ս Կорецкий А.Д., Теорико-правовые основы учения о договоре. էջեր 17-41:

մար կարևոր է նաև բնութագրող այլ հատկանիշ. դա նրա ուղղվածությունն է իրավունքներ և պարտականություններ (իրավահարաբերություններ) առաջացնելուն: Եթե այդ հատկանիշը բացակայում է, ապա հիմք չկա համաձայնությունը և պայմանագիրը նույնացնելու<sup>1</sup>:

Այս կապակցությամբ Ի. Բ. Նովիցկին հավելում է, որ քաղաքացիական իրավունքի պայմանագրերը պետք է առանձնացվեն համաձայնություններից, որոնք կարող են տեղ ունենալ և ունեն խորհրդային իրավունքի այլ ոլորտներում, օրինակ՝ խորհրդային ընտանեկան իրավունքում: Ամուսնությունն անիմաստ է առանց գույքերի ազատ համաձայնության, այնուամենայնիվ, այդ համաձայնությունը կարելի է համարել (այդ էլ որոշ վերապահումներով) սովորական պայմանագիր միայն բուրժուական իրավունքում: Համաձայնությունը ամուսնական իրավահարաբերության իրավաբանական փաստերից մեկն է միայն՝ անձնական տարրը այնքան է գերակշռում ընտանեկան իրավահարաբերություններում, որ համաձայնություններն այստեղ ինքնուրույն նշանակություն չեն ստանում և «բոլոր դեպքերում պետք է կտրուկ հեռացվեն գույքային քաղաքացիաիրավական պայմանագրերից»<sup>2</sup>:

Եթե թողնենք նշված տեսակետի խորհրդային գաղափարական պահը, կմնա հիմնականը. նախ՝ համաձայնությունը որպես այդպիսին ամուսնության համար ոչ միայն ընդունելի է, այլև անխուսափելի է (գոնե որպես ամուսնական իրավահարաբերության առաջացման նախադրյալ), երկրորդ՝ ամուսնական և այլ ընտանեկան-իրավական համաձայնությունները չեն կարող ունենալ քաղաքացիաիրավական բնույթ՝ դրանցում անձնական բաղադրիչի գերակշռելու պատճառով:

Որպես պայմանագրի դասական տեսությանն այլընտրանք (որտեղ առաջին պլանի վրա կողմերի փոխադարձ համաձայնությունն է)՝ հանդես է գալիս **պայմանագիր-խոստում տեսությունը**, որն արտացոլված է արևմտաեվրոպական մի շարք երկրների դոկտրինա-

<sup>1</sup> Ст'у Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Кн. 1. М., 2001, էջ 149:

<sup>2</sup> Ст'у Новицкий И.Б., Избранные труды по гражданскому праву. Т. 2. М., 2006, էջեր 113-114:

յում:

Պայմանագիր-խոստումը չի հանգեցվում բնականաբար միակողմանի գործարքի հասկացությանը. նախ՝ խոստումը պետք է տեղ հասցվի նրան, ում այն ուղղված է, երկրորդ՝ խոստման պարտադիր ուժի հիմքում ընկած է խոստման հասցեատիրոջ հաշվարկը կամ վստահությունը<sup>1</sup>: Չբացառելով քաղաքացիաիրավական գործարքի դոկտրինի զարգացումը նաև այդ ուղղությամբ, Ի.Վ. Բեկլենիչևան առաջարկում է պայմանագրի հետևյալ սահմանումը. «Քաղաքացիաիրավական պայմանագիրը երկու կամ ավելի կողմերի համաձայնությունն է կամ մեկ կողմի խոստումը, որի վրա հույս է դրել մյուս կողմը, որոնք ուղղված են քաղաքացիական իրավահարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը և դադարեցմանը»<sup>2</sup>:

Ամուսնություն-պայմանագիր հայեցակարգի տեսակետից այս տեսությանը կարող է նշանակություն տրվել միայն անվավեր ամուսնության պատասխանատվության յուրահատուկ մեկնաբանման դեպքում (գույքային վնասի հատուցման իրավունքը անբարեխիղճ ամուսնուց), ինչպես նաև զուտ հիպոթետիկ՝ նյութական և բարոյական վնասի հատուցման հնարավորություն նախատեսելով, որը վրա է հասել ամուսնությունը կնքելու հրապարակային խոստումից հրաժարվելու դեպքում<sup>3</sup>:

Ընտանեկան-իրավական պայմանագրի տեսության համար կարևոր է նաև Օ. Ս. Իոֆֆեի, Ե. Ա. Սուխանովի և մյուսների տեսակետը՝ պայմանագրի գոյության երեք ձևերի մասին՝ **որպես համաձայնություններ, որպես դրանց առաջացրած իրավահարաբերու-**

---

<sup>1</sup> Տե՛ս Бекленищева И.В. Гражданско-правовой договор. Классическая традиция и современные тенденции. М., 2006, էջեր 140-141:

<sup>2</sup> Տե՛ս Бекленищева И.В., նշված աշխ., էջ 176:

<sup>3</sup> Հետաքրքրություն է ներկայացնում Ուկրաինայի ընտանեկան օրենսգրքի 31 հոդվածը, ըստ որի՝ «Կողմը, որը հրաժարվել է ամուսնություն կնքելուց, պարտավոր է մյուս կողմին հատուցել պատասխանատվությանը և ամուսնության գրանցմանը նախապատրաստվելու համար մյուս կողմի կատարած ծախսերը»: Լ.Ե. Չիչերովան նշում է, որ անհրաժեշտ է հստակեցնել, որ կողմը ազատվում է այդ հատուցելու պարտականությունից, մյուս կողմի չարաշահման դեպքում: Օ.Յու. Իլլինան և Ֆ.Յու. Բեսպալովը գտնում են, որ այդ դեպքում սակայն համապատասխան հարաբերություններն ունեն քաղաքացիաիրավական բնույթ և անհամատեղելի են Ընտ. օր-ով կարգավորվելու համար:

## յուններ և որպես փաստաթղթեր<sup>1</sup>:

Առաջին հերթին այդ իրավահարաբերության տակ ենթադրվում են պարտավորական իրավահարաբերությունները: Պարտավորությունը երկու կողմերի միջև հարաբերություն է, որոնցից մեկն ունի պահանջի իրավունք, իսկ մյուսը՝ այդ իրավունքին համապատասխան պարտականություն<sup>2</sup>: Ընտանեկան իրավական պայմանագրերը՝ ամուսնության կնքումը (որոշ իրավական համակարգերում), երեխային խնամատար ընտանիք հանձնելու պայմանագիրը, երեխայի բնակության վայրի մասին համաձայնությունը, նույնպես միշտ չէ, որ կարելի է պարտավորություն անվանել: Գ.Ֆ. Շերշենևիչը ընդհանրապես անթույլատրելի էր համարում ոչ գույքային շահերով պարտավորությունները, ոչ թե նրա համար, որ դրանք կրում են անձնական բնույթ (այդ ժամանակ քաղաքացիական իրավունքի շարքին էին դասվում անձնական հարաբերությունները, որոնք սահմանվում էին ընտանեկան միությանը), այլ որ դրանք հակադրվում են պարտավորական հարաբերությունների բնույթին: Դժվար է գտնել սանկցիա այն պարտավորությունների չկատարման համար, որոնք չեն կարող արտահայտվել դրամական գնահատմամբ<sup>3</sup>:

Նրա հետ համաձայն չէին Վ.Ի. Սինայսկին, Ի.Ա. Պոկրովսկին, իսկ հետագայում՝ Ի.Բ. Նովիցկին, Լ.Ա. Լուսցը և ուրիշներ<sup>4</sup>, որոնք հնարավոր էին համարում ոչ գույքային շահերով պարտավորությունների գոյությունը: «Ի սկզբանե պարտավորության իրավաբանական կառուցվածքը, որն օգտագործվում է նյութական բարիքների փոխանցման սպասարկման համար լիովին, պիտանի է նաև ոչ գույքային հարաբերությունների ձևակերպման համար»<sup>5</sup>:

Պայմանագրային (ընտանեկան իրավունքի սուբյեկտների միջև համաձայնության հիման վրա) և արտապայմանագրային (օրենքի

<sup>1</sup> Ст'я Иоффе О.С., Обязательственное право. М., 1978, էջեր 26-27: Гражданское право/ под ред. Е.А. Суханова. Т. 2, полутом 1. М. 2000, էջեր 151-152; Гражданское право/ Под ред. А.П., Сергеева, Ю.К. Толстого. Ч. 1. М., 1998, էջեր 495 և հաջորդ:

<sup>2</sup> Ст'я Агарков М.М., Обязательство по советскому гражданскому праву // Избранные труды по гражданскому праву. Т. 1., М., 2002, էջ 187:

<sup>3</sup> Ст'я Шершеневич Г.Ф., նշված աշխ., էջեր 377, 378:

<sup>4</sup> Ст'я Покровский И.А., Основные проблемы гражданского права, էջ 238; Синайский В.И. Русское гражданское право. М., 2002, էջեր 6-7, 299; Новицкий И.Б., Лунц Л.А. Общее учение об обязательстве. М., 1950, էջ 58:

<sup>5</sup> Ст'я Гражданское право / под ред. А.П. Сергеева. Т. 1. М., 2008, էջ 812:

ուղղակի կարգադրությամբ) ընտանեկան-իրավական պարտավորությունները պատմականորեն և տեսականորեն հանգում են նախևառաջ ալիմենտներին, այսինքն՝ բուն գույքային բնույթի են: Ներկայումս դրանց շրջանակն էապես ընդլայնված է և առաջին հերթին հենց ոչ գույքային տիպի պայմանագրային պարտավորությունների (առանձին ապրող ծնողի կողմից երեխային դաստիարակելու մասին, խնամատար ծնողության մասին, սուրոգատ մայրության մասին և այլն) կառուցվածքի հաշվին:

Սակայն ինչպես արդարացիորեն նշում է Ս. Յու. Չաշկովան, ընտանեկան-իրավական պայմանագրերը և դրանցից բխող պարտավորությունները բնութագրվում են՝ օրենքում ուղղակիորեն նշված հատուկ սուբյեկտային կազմով, իրավունքների և պարտականությունների անփոխանցելիությամբ և անօտարելիությամբ, հանրային շահի առկայության հետ կապված՝ կողմերի աննշան ազատ հայեցողությամբ, որի սահմանափակումները նախատեսված են ընտանեկան-իրավական նորմերով, և լրացուցիչ բնույթի այլ առանձնահատկություններով: Ըստ էության, դրանք համանման են ընտանեկան իրավահարաբերությունների առանձնահատկություններին (ի լրումն թվարկվածների՝ անձնական-վստահական, երկարատև ու անհատույց բնույթը և այլն)<sup>1</sup>:

Վերջապես ընտանեկան-իրավական պայմանագրի, այդ թվում՝ ամուսնության, բովանդակության իմաստավորման համար էական է **պայմանագիր-գործարքի փաստական կազմի հարցը**: Ե.Ա. Կրաշենինիկովը նշում է, որ պետք է տարբերել դեպքերը, որոնցում գործարքը կողմերի կամարտահայտության հետ մեկտեղ ունի նաև այլ բաղկացուցիչ տարրեր, և դեպքերը, երբ գործարքի ուժի մեջ մտնելու համար պահանջվում են նրա փաստական կազմից դուրս գտնվող նախադրյալներ (օրինակ՝ դրա պետական գրանցումը<sup>2</sup>): Ընտանեկան օրենսդրության և ամուսնության վերաբերյալ գերիշխող տեսակետի (ներառյալ փաստացի ամուսնության չճանաչումը) իմաստով ամուսնության գրանցումը համարվում է ամուսնության իրավաստեղծ հատկանիշ, այլ ոչ թե նրա իրավաբանական ուժի նա-

<sup>1</sup> Ст'ю Чашкова С.Ю. Система договорных обязательств в российском семейном праве: дис....канд.юрид. наук. М., 2004, էջ 73: Ընդ որում՝ պարզ չէ, թե հեղինակը պայմանագրերի շարքում ինչու չի նշում ամուսնության մասին պայմանագիրը:

<sup>2</sup> Ст'ю Крашенинников Е.А. Фактический состав сделки // Очерки по торговому праву. Вып. 11. Ярославль, 2004, էջեր 8-9:

խաղրյալ:

Այսպիսով, ցիվիլիստիկայում պայմանագրի էության վերաբերյալ դատողությունների բազմազանությունից, այնուամենայնիվ, ընտանեկան-իրավական պայմանագրերի, տվյալ դեպքում ամուսնության բնույթի կապակցությամբ կարելի է առանձնացնել հետևյալը. 1) երկու քաղաքացիների ազատ կամքի և կամահայտնության համաձայնվածություն, 2) հավասարություն, 3) ձևին ներկայացվող պահանջներ (ամուսնության համար՝ գրավոր), 4) պետական գրանցման հատուկ նշանակություն՝ որպես պայմանագրի իրավաստեղծ տարր, 5) ուղղվածությունը իրավունքների և պարտականությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարմանը, 6) լուծման հարաբերական ազատություն:

Ամուսնության այնպիսի տարրեր, ինչպիսիք են կողմերի կամքի համաձայնեցումը, կնքման գրավոր ձևը, վավերության պայմանների ընդլայնված համակարգը, արտահայտում են ամուսնության դասական պայմանագրային էությունը: Չբացառելով ամուսնության պայմանագրային բնույթը՝ մենք սակայն, ձգտում ենք բնորոշել նրա ճյուղային այլ պատկանելիությունը, նրա կառուցման այլ մեթոդաբանությունը:

**Առաջին**, տեղին է մեջ բերել Օ. Ս. Իոֆֆեի այն դատողությունը, որ ամուսնական միությունը թեև նման է քաղաքացիաիրավական գործարքին, քանի որ ամուսնությունը առաջանում է իրավաբանական փաստի հիման վրա, որը կատարվում է իրավական հետևանքներ առաջացնելու մտադրությամբ, սակայն նրա սոցիալական բովանդակությունը և հենց այդ իրավական հետևանքները բացառում են ամուսնությունը որպես քաղաքացիաիրավական գործարքների տեսակներից մեկը դիտելը: Գործարքի իրավաբանական նպատակը դրա մասնակիցների համար կոնկրետ իրավունքներ ու պարտականություններ ստեղծելն է, ամուսնությունը, որը հիմնված է սիրո, այլ ոչ թե բացառապես գույքային շահերի վրա, նման իրավական նպատակ չի հետապնդում, նրա նպատակն է ստեղծված միության պետական ճանաչում ստանալը, որի հիմքը սերն ու հարգանքն է, որոնք թեև չեն մտնում նրա իրավական բովանդակության մեջ, սակայն արմատախիլ են անում այն, երբ վերանում են: Դա բոլորովին անհնար է քաղաքացիաիրավական գործարքների դեպքում<sup>1</sup>:

<sup>1</sup> Ст'я Иоффе О.С., Советское гражданское право. Т. 3., Л., 1965, էջեր 187-188:

**Երկրորդ.** ընդունելի է նաև Ա. Մ. Նեչանայի հղումն այն մասին, որ երբ կողմերը ամուսնության մեջ են մտնում, նրանք պայմանագիր չեն կնքում նոր համաձայնությունների մասին, քանի որ իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը կարգավորվում են պետության օրենքներով... Կնքվող պայմանագրի էությունը այն է, որ պետությունը սահմանում է հարաբերություններ, որոնց մեջ մտնելը որոշվում է պետության կողմից անկախ, ազատ կողմերի կամարտահայտության միջոցով, ընդ որում՝ դրանք չեն կարող ոչ կատարելագործվել, ոչ փոփոխվել կողմերի համաձայնությամբ»<sup>1</sup>:

Իսկապես, ամուսնության իրավական էության իմպերատիվ ամրագրումը նրան տարբերում է քաղաքացիաիրավական գործարքներից, իսկ պնդումն այն մասին, որ քաղաքացիական օրենսդրությունը պայմանագիր-գործարքների համար նույնպես բովանդակում է պարտադիր համարվող մի շարք ընդհանուր և հատուկ կանոններ, թեև արդարացի է, սակայն հայեցողության ազատությունը այդ դեպքերում և իմպերատիվին միանալու կամ չմիանալու (ամուսնության մեջ մտնելու կամ չմտնելու) ազատությունը, որը կիրառվում է ամուսնական միության նկատմամբ, խիստ տարբեր են: Ընդ որում՝ ամուսնական իրավահարաբերության հենց բովանդակությունը բոլորովին տարբերվում է քաղաքացիաիրավական պարտավորական (և ոչ պարտավորական) պայմանագրային իրավահարաբերություններից, ինչը և նշում էին Գ. Ֆ. Շերշենևիչը և այլ ցիվիլիստներ:

**Երրորդ.** ամուսնություն-պայմանագրի առարկան բավականին յուրահատուկ է՝ տղամարդու և կնոջ համատեղ կյանքը<sup>2</sup>, որը բնութագրվում է հոգևոր, զգացմունքային, սեքսուալ, տնտեսակենցաղային փոխգործողությամբ: Մ. Վ. Կրոտովի արդարացի դիտարկմամբ, թեև վերջին տարրերը դուրս են մնում ուղղակի իրավական կարգավորումից, դրանք նույնպես չի կարելի համարել իրավունքին անտարբեր<sup>3</sup> (օրինակ՝ բոլոր այդ հանգամանքները գնահատվում են ամուսնությունն անվավեր ճանաչելու ժամանակ, ինչպես նաև այն լու-

<sup>1</sup> St'u Нечаева А.М., Семейное право. Актуальные проблемы теории и практики, 2007, էջ 42:

<sup>2</sup> Բնականաբար, բնականության վայրի, զբաղմունքի ազատ ընտրության սկզբունքի, ընտանիքի բոլոր հարցերը փոխադարձ համաձայնությամբ լուծելու սկզբունքների հաշվառմամբ:

<sup>3</sup> St'u Гражданское право / под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. М., 2001, Т. 3, էջ 317:

ծելիս):

**Չորրորդ.** ամուսնություն-պայմանագրի սուբյեկտներն անծինք են, ովքեր բավարարում են քաղաքացիական իրավունքին ոչ տիպիկ պահանջների՝ տարասեռությունը, մերձավոր ազգակցության և որդեգրման իրավահարաբերությունների, ինչպես նաև որոշակի հիվանդությունների բացակայությունը, այլ ամուսնության մեջ չգտնվելը: Ամուսնացնողների տարիքը նույնպես որոշվում է բոլորովին յուրահատուկ կանոններով: Միակ նույն պայմանը գործունակությունն է:

**Հինգերորդ.** այլ կերպ է արտահայտվում ամուսնության անվավերության ինստիտուտը, հատկապես իրավական հետևանքների սխեման:

**Վեցերորդ.** սկզբունքորեն այլ կերպ են կատարվում ամուսնություն-պայմանագրի լուծումը և դադարումը (ամուսնալուծության հիմքերը, ամուսնալուծության հատուկ կանոնները անհայտ բացակայողի, անգործունակի հետ, մահացածի հայտնվելու դեպքում և այլն):

Այդպիսով, ամուսնության պայմանագրային բնույթի մասին համակարծիք լինելով Մ. Վ. Անտոկոլսկայայի, Մ. Վ. Կրոտովի և մյուս ցիվիլիստների հետ, միաժամանակ ոչ մի կերպ չնսեմացնելով և առավել ևս չբացառելով ամուսնության էթիկա-փաստական էությունը, որը կարող է համարվել և՛ որպես առեղծվածային խորհուրդ, և որպես բարոյական պարտավորություն, և՛ որպես սեքսուալ-տնտեսական (և նույնիսկ քաղաքական) միություն և այլն, մենք պնդում ենք ամուսնություն - համաձայնության և ամուսնություն – իրավահարաբերության ընտանեկան – իրավական՝ քաղաքացիաիրավականից սուվերեն պատկանելիությունը:

Գտնում ենք, որ ամուսնության պայմանագրային բնույթի վերաբերյալ հետագա հետազոտությունները պետք է շարունակվեն ընտանեկան իրավունքի շրջանակներում, սակայն կապակցված քաղաքացիական իրավունքի հետ և պայմանագրի էության միասության ու բազմատեսակության վերաբերյալ ընդհանուր տեսական պատկերացումների հիման վրա:

**Tatevik Davtyan**

*Candidate of Legal Sciences, Docent, YSU Chair of Civil Law*

## **CONCEPTS ON ESSENCE OF MARRIAGE**

This article is dedicated to the concepts on essence of marriage formed in legal professional doctrine.

The author emphasizes the importance of clarifying the nature of marriage especially nowadays for new legal system having soviet heritage, because the more deeper legal problem - branch belonging of Family law is mostly conditioned by one way or another perception of marriage phenomenon.

In the article the author presents the classical approaches on the nature of marriage, defends the concept on contractual nature of the marriage and concludes that the research on the contractual nature of the marriage should continue connected with the Civil law, but within the scope of Family law.